

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО  
ХОЗЯЙСТВА  
«АРМЛЕС»  
ГОСУДАРСТВЕННАЯ  
НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ  
**Директор**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՀԱՅԱՆՏԱՌ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
**Տնօրեն**

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF  
AGRICULTURE  
“HAYANTAR”  
STATE NON COMMERCIAL  
ORGANIZATION  
**Director**

0047, Ա.Արմենակյան 129

Հտն. 65-17-38, 65-02-35

23.11.15թ N 01-10/329

Ձեր \_\_\_\_\_

Գավառի բնապահպանական  
տեղեկատվության հասարակական  
Օրհուա կենտրոնի համակարգող  
պարոն Լ. Ասոյանին

Ի պատասխան Ձեր 17.11.2015թ. NAA-011 գրության տեղեկացնում եմ, որ.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում «Հայանտառ» ՊՈԱԿ-ն ունի մեկ՝ «Ճամբարակի  
անտառտնտեսություն» մասնաճյուղը, որի ընդհանուր տարածքը կազմում է 9022  
հա, որից անտառածածկ՝ 6547 հա:

2. Հակահրդեհային անվտանգության նպատակով, 2011թ. կատարվել է 1 կմ  
հակահրդեհային ճանապարհի կառուցում, 2013 թվականին 2 կմ հակահրդեհային  
ճանապարհի խնամք, իսկ 2015 թվականին՝ 3 կմ հակահրդեհային շերտի  
կառուցում: 2012 և 2014 թվականներին «Ճամբարակի անտառտնտեսություն»  
մասնաճյուղում նման աշխատանքներ չեն կատարվել:

3. «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառապահախմբի  
աշխատողների կողմից անտառային տարածքների կենդանական աշխարհի  
պահպանության ուղղությամբ մշտապես տարվում են աշխատանքներ, որի  
արդյունքում, վերջին հինգ տարիների ընթացքում անտառտնտեսության տարածքում  
որսի կանոնների և ժամկետների խախտման, ինչպես նաև ձկնագողության դեպքեր  
չեն արձանագրվել:

4. 2014 թվականին «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղում  
իրականացվել են անտառապատման աշխատանքներ 10 հա տարածքում:

5. Անտառտնտեսության անտառային տարածքներում իրականացվում են միայն խնամքի և սանիտարական հատումներ, որոնց տեղը և ծավալները նախատեսված են անտառտնտեսության համար մշակված անտառկառավարման պլանով, որը հաստատվել է 2010 թվականին:

6. 2010-2015 թվականների ընթացքում «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են հետևյալ խնամքի և սանիտարական հատումները.

2011թ – 45,8 հա - 1034 խմ ընդհանուր ծավալով

2012թ – 76,54 հա – 1408 խմ ընդհանուր ծավալով

2013թ – 92,1 հա – 1041 խմ ընդհանուր ծավալով

2014թ – 108,2 հա – 1241 խմ ընդհանուր ծավալով

2015թ – 133 հա – 1187 խմ ընդհանուր ծավալով:

«Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղում 2011-2015թթ. արձանագրվել են հետևյալ ապօրինի հատումները՝

2011 թ.- 86 ապօրինի հատված ծառ, 2012 թ. - 78 ծառ, 2013թ. - 28 ծառ, 2014թ. - 5 ծառ և 2015 թվականի հոկտեմբերի վերջի դրությամբ՝ 1 ապօրինի հատված ծառ:

Հարգանքով՝

Մ. Մաթևոսյան

Անտառների և անտառային  
հողերի օգտագործման բաժին  
65.01.54

Անտառների պահպանության և  
պաշտպանության բաժին  
65.47.28

Անտառվերականգնման և  
անտառապատման բաժին  
65.04.25